

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի կողմից 2018թ. երկրորդ կիսամյակում կատարված աշխատանքների մասին

ՀՀ Կոտայքի մարզպետարանի 2018թ. տարեկան ծրագիրը պլանավորվել է ռիսկերի գնահատման հիման վրա և հանդիսանում է ՀՀ Կոտայքի մարզպետարանի 2018-2020թթ. ռազմավարական ծրագրի բաղկացուցիչ մասը: 2018թ. ներքին աուդիտի տարեկան ծրագիրը հաստատվել է ՀՀ Կոտայքի մարզպետի 29.12.2017թ. թիվ 323-Ա որոշմամբ, որով 2018թ. նախատեսվում է իրականացնել թվով 36 աուդիտ, որից 2-ը՝ մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումներում, 4-ը՝ 100% պետական բաժնեմաս ունեցող ընկերություններում, 30-ը՝ պետական ոչ առևտրային կազմակերպություններում: 2018թ. երկրորդ կիսամյակում նախատեսվել և իրականացվել է աուդիտ 14 միավորներում, այդ թվում.

1. <<Ծաղկաձորի բժշկական ամբուլատորիա>> ՊՓԲԸ
2. <<Զատի առողջության առաջնային պահպանման կենտրոն >> ՊՈԱԿ
3. <<Բջնիի բժշկական ամբուլատորիա>> ՊՈԱԿ
4. <<Արզականի բժշկական ամբուլատորիա>> ՊՈԱԿ
5. <<Ալափարսի առողջության առաջնային պահպանման կենտրոն >> ՊՈԱԿ
6. <<Հրազդանի Ա.Իսահակյանի անվան N 9 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ
7. <<Քասախի N 1 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ
8. <<Չարենցավանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ
9. <<Աբովյանի Վ.Համբարձումյանի անվան N 10 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ
10. <<Քաղսիի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> ՊՈԱԿ
11. <<Չարենցավանի Ս.Ավանյանի անվան N 4 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ
12. <<Հրազդանի Հ.Պարոնյանի անվան N 12 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ
13. <<Բյուրեղավանի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ
14. <<Նաիրիի բժշկական կենտրոն>> ՓԲԸ:

Բոլոր կազմակերպություններում նախատեսվել է իրականացվել ֆինանսական աուդիտ՝ կազմակերպությունների ֆինանսական կառավարման գնահատման նպատակով՝ նախապես նախանշելով այն գործընթացները (թիրախները), որոնք ռիսկերի գնահատման արդյունքում համարվել են գնահատման ենթակա: Աուդիտը իրականացվել է ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտներին և դրանց կիրառման մեթոդական ցուցումներին համապատասխան, որի արդյունքներով կազմվել է արձանագրություն և աուդիտորական հաշվետվություն: Հաշվետվություններում արտացոլված են տվյալ միավորի կողմից թույլ տրված թերությունները, բացթողումները, անհամապատասխանության դեպքերը, դրանց հայտնաբերման նպատակով կիրառված աուդիտի գործիքները, կատարված ընտրանքների հիմնավորումները: Աուդիտի արդյունքներով արձանագրված թերությունները, բացթողումները և անհամապատասխանության դեպքերը քննարկվել են ՀՀ Կոտայքի մարզպետարանում, որի հիման վրա տրվել են համապատասխան հանձնարարականներ (գործողությունների ծրագիր)՝ դրանց վերացման և հետագա գործունեությունը բարելավվելու ուղղությամբ: